

# «ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### «ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական սահմանի մասին» 2001 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-265-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ «սահմանապահ զորքերի զինծառայողները» բառերից հետո լրացնել «և մաքսային մարմինները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմանը համապատասխան սահմանված «մեկ կանգառ» համակարգի ներդրման շրջանակներում» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ «մաքսային հսկողության» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմանը համապատասխան սահմանված «մեկ կանգառ» համակարգի ներդրման շրջանակներում» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 25-րդ հոդվածում «թույլտվությամբ» բառը փոխարինել «և մաքսային մարմինների թույլտվությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմանը համապատասխան սահմանված «մեկ կանգառ» համակարգի ներդրման շրջանակներում» բառերով:

**Հոդված 4.** Օրենքի 26-րդ հոդվածի՝

1. 4-րդ պարբերության մեջ «պահանջով, մաքսային մարմինների համապատասխան ներկայացուցիչների ներկայությամբ» բառերը փոխարինել «կամ մաքսային մարմինների պահանջով» բառերը:
2. 5-րդ պարբերության մեջ «թույլտվությամբ» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմանը համապատասխան սահմանված «մեկ կանգառ» համակարգի ներդրման շրջանակներում» բառերով:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: